# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 09.01.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/15-11 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<01>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Եվրոֆարմ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Վ. Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.01.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/15-11 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին,

### 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 09.01.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

### 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ԳՆՈՐԴ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Ադամյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
<<Եվրոֆարմ>> ՍՊԸ
ք. Երևան, Ամիրյան 18շ. 1ա. բն
ՀՎՀՀ 02563667
h/h 163008159960
<<ՀայԷկոնոմբանկ>> ԲԲԸ
europharmarmenia@yahoo.com
010-53-05-77
Վ. Գալստյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.